ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

«ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման արդյունքների հաստատման)

ք. Երևան 22.01.2019թ.

ժամը՝ 15.30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սարգսյան

Անդամներ՝ Հ. Ամիրյան

Ս. Դեմիրճյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գագինյան

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով հայտերի գնահատման նիստը տեղի ունեցավ 22.01.2019թ., ժամը 15:30-ին, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում (ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վարչական շենք, 1-ին հարկ թիվ 6 սենյակ):

24.12.2018թ. թիվ 8 արձանագրության որոշմամբ «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն:

24.12.2018թ. հրապարակվել է «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով պայմանագիր կնքելու որոշումը:

08.01.2019թ. ծանուցվել է ընտրված մասնակից «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին:

16.01.2018թ. ստացված գրությամբ «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հրաժարվել է 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով պայմանագիր կնքելուց:

17.01.2019թ.-ին, համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 49-րդ դրույթների,

ծանուցվել է հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցները՝ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Սասնա ճրագ» ՍՊԸ և «ՖՈՏՈՆ» ՍՊԸ (թիվ 22 չափաբաժնով չի ծանուցվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն, քանի որ հայտ ներկայացնելու դրությամբ ունեցել է 5000 դրամ դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն բյուջեի նկատմամբ) ներկայացնել թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Սահմանված ժամկետում՝ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Սասնա ճրագ» ՍՊԸ և «ՖՈՏՈՆ» ՍՊԸ կողմից ներկայացվել են թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը):

«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Սասնա ճրագ» ՍՊԸ և «ՖՈՏՈՆ» ՍՊԸ վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ աշխատակցի կողմից տրվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացություն:

21.01.2019թ. հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել է թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը), գնահատման թերթիկների երկուական օրինակ և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի, 49-րդ կետի դրույթները, «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 7.19, 7.20, 7.21 կետերը, գնահատման թերթիկները՝ Հանձնաժողովը 3 կողմ, 0 դեմ ձայնով, ***միաձայն որոշեց***՝

Ա. Ընտրված մասնակից ճանաչել՝

- «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ին՝ թիվ 11, 13, 22 չափաբաժիններով
- «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին՝ թիվ 18 չափաբաժնով
- «Սասնա Ճրագ» ՍՊԸ-ին՝ թիվ 3 չափաբաժնով

Բ. Հաստատել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով **պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության** տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակել:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Սամվել Սարգսյան

Անդամներ՝ _____ Համլետ Ամիրյան

_____ Սուսաննա Դեմիրճյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սահակ Գագինյան